ՊԱՏՄԱԲԱՆԸ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ
(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի ծննդյան 55-ամյակի առթիվ)

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանը ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Ախալքալաքում:

1977 թ. ոսկե մեդալով ավարտել է տեղի Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 4 հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Ուսումնառության տարիներին գերազանց առաջադիմության համար ստացել է Հակոբ Մանանդյանի անվան կրթաթոշակ: 1982 թ. գերազանցության դիպլոմով ավարտելով բուհը՝ մինչև 1985 թ. եղել է ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: 1989 թ. Ա. Մելքոնյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» թեմայով:

1986 թ. հոկտեմբերից Ա. Մելքոնյանն աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, նախ՝ որպես լաբորանտ, ապա գիտաշխատող, գիտական քարտուղար և գիտական հարցերով փոխտնօրեն: 2002 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» թեմայով: Նույն թվականին ընտրվել է ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: 2004 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. ընտրվել է ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս:

Ա. Մելքոնյանի կենսագործունեության ոլորտը լայն և ընդգրկուն է. փայլուն հետազոտող է, հմուտ գիտակազմակերպիչ, մանկավարժ, մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ ու սկզբունքային մասնակից: Եվ այս ամենի համար նա նախևառաջ պարտական է հայրական օջախին՝ մանկավարժ, վաստակավոր ժուռնալիստ Աղասի Հարությունի Մելքոնյանի ընտանիքին:

Որպես հետազոտող և գիտության կազմակերպիչ Ա. Մելքոնյանը իրավամբ լայն հեղինակություն է վայելում հայրենական և արտերկրի հայագիտական ու

հասարակագիտական շրջաններում և ընթերցող հասարակայնության մեջ: Արտաքո կարգի աշխատասիրությունը և գիտական հետաքրքրությունների ընդարձակ շառավիղը՝ Հայաստանի պատմական ժողովրդագրություն, Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն, Ջավախքի պատմություն, հայ-վրացական, հայ-թուրքական հարաբերություններ և այլն, նրան հնարավորություն է տվել հեղինակել 15 գիրք և շուրջ 380 գիտական հոդված: Դրանց հրատարակության աշխարհագրական սահմանները շատ լայն են, լույս են տեսել ոչ միայն մեզանում, այլև Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրանում, Արգենտինայում, Հունգարիայում:

Ա. Մելքոնյանի մենագրական առաջին երախայրիքը 1994 թ. լույս տեսած «Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» աշխատությունն է: Ինչպես հայտնի է, թուրքական պատմագիտությունը ազգայնական և պանթուրքիստական դիրքերից տասնամյակներ շարունակ այն միտքն է զարգացնում, թե պատմական բոլոր ժամանակներում Արևմտյան Հայաստանում կամ, ինչպես իրենք են գրում՝ Արևելյան Անատոլիայում, չի եղել մի վարչամիավոր, որտեղ հայերը կազմեին բնակչության մեծամասնությունը: Հեռուն գնացող մի կեղծիք, որի նպատակը մեր ժողովրդի իրավունքի ժխտումն է այդ տարածքների նկատմամբ: Թուրքերի այս պնդումների մերկացման տեսակետից խիստ արժեքավոր է Արևմտյան Հայաստանի զգալի մասը կազմող Էրզրումի նահանգի պատմաժողովրդագրական խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ Ա. Մելքոնյանի տքնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծված այս մենագրությունը: Ուսումնասիրություն, որը լույս է սփռում ժողովրդագրական բուռն գործընթացներով աչքի ընկնող մի ժամանակահատվածի՝ XIX դ. առաջին երեսնամյակի պատմական բազմաթիվ անցուդարձերի վրա: «Մելքոնյանի մենագրության հաջողությունը պայմանավորված է եղել երկու էական հանգամանքով,– այս գրքի մասին գրած «Արժեքավոր աշխատություն Կարնո նահանգի մասին» վերնագրով գրախոսականում մասնավորապես նշել է ԳԱԱ թղթակից անդամ Հ. Բարթիկյանը:– Առաջին՝ հեղինակը օգտագործել և շրջանառության մեջ է դրել բազմաբնույթ և հարուստ աղբյուրագիտական նյութ: Օգտագործվել են ինչպես Երևանի (հատկապես Մատենադարանի մի շարք ֆոնդեր), այնպես էլ Մոսկվայի և Թբիլիսիի տարբեր արխիվների նյութեր: … Երկրորդ՝ մանրակրկիտ համատեղվել է հավաքված հարուստ նյութը և Կարնո նահանգի 16 գավառների ժողովրդագրության, նրանցում ազատագրական շարժումների, սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ ստեղծվել է աշխատությունների մի ինքնատիպ շարք:

Հեղինակի ուշադրության կենտրոնում են այնպիսի կարևոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ նահանգի բնակավայրերի տեղագրությունը, ազգաբնակչության թվաքանակը, ազգային կազմը, էթնիկական տեղաշարժերը, դրանց սոցիալ-քաղաքական նախադրյալների բացահայտումը և այլն» («Հայաստանի Հանրապետություն», 22. XI. 1994):

Իր այս աշխատությամբ, փաստորեն, Ա. Մելքոնյանը հայ պատմագիտության ասպարեզում միանգամայն նոր բնագավառի՝ Հայաստանի շրջանների ժողովրդագրական հետազոտության սկիզբ է դրել՝ խիստ կարևորելով դրա հրատապությունն ու քաղաքական նշանակությունը:

Այս մենագրության տրամաբանական շարունակությունը կարելի է համարել Ա. Մելքոնյանի «Ջավախք. պատմության ուրվագծեր» (1999) և «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (2003) աշխատությունները, քանզի ջավախահայերի մեծ մասի նախնիները տեղափոխվել էին Էրզրումի նահանգից 1829–1830 թթ.: Նշված գրքերից երկրորդը ներառում է հետազոտական իմաստով տարողունակ ժամանակաշրջան և նվիրված է հայ պատմագրության մեջ սակավ ուսումնասիրված, բայց մեծ կարևորություն ներկայացնող բնագավառներից մեկին՝ Հյուսիսային Հայաստանի պատմական ժողովրդագրության խնդիրներին, որոնք, պայմանավորված ներկա ժամանակաշրջանում տարածաշրջանային նոր զարգացումներով, զուտ գիտական նշանակությունից բացի, ձեռք են բերում նաև քաղաքական, գործնական, այժմեական հնչեղություն և կարող են ուղեցույց լինել քաղաքագետների, ռազմավարությամբ զբաղվող մեր պետական, քաղաքական գործիչների համար: Մենագրությունն ընդգրկում է Ջավախքի քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության, Հայ առաքելական եկեղեցու պատմության, Հյուսիսային Հայաստանի երկրագիտության և քարտեզագրության, մշակութաբանության, վիճակագրության բնագավառները՝ իրենց ամբողջության մեջ: Արդեն իսկ նկատվել է, որ չնայած գրքի վերնագրին՝ այն ավելի ընդգրկուն է և շոշափում է բազմաթիվ ու բազմապիսի հարցեր: Գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային հարուստ նյութ՝ այն խիստ օգտակար է ինչպես Ջավախքի, այնպես էլ հարևան Ախալցխայի, Ասպինձայի, Ծալկայի և այլ գավառների, առհասարակ հայ-վրացական հարաբերությունների ու ողջ տարածաշրջանի պատմության ուսումնասիրության համար: «Ա. Մելքոնյանն ընտրել է թեմայի բազմաքանակ ու բազմաբնույթ, հաճախ խճողված հարցերը քննարկելու և լուսաբանելու միանգամայն ճիշտ ու արդարացված եղանակ՝ պատմաքննական մեթոդը,– նկատել է ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը՝ գրախոսելով սույն գիրքը:– Շնորհիվ լեզուների և առաջին հերթին վրացերենի իմացության, բոլոր անհրաժեշտ սկզբնաղբյուրների ու գրականության նյութը ներառելու և պատմագիտական հիմնավոր պատրաստ-

վածության, Աշոտ Մելքոնյանը ստեղծել է բարձրարժեք ու մնայուն աշխատություն: Տեսական լավ պատրաստվածությունը, պատմական աշխարհագրության և ժողովրդագրության հեղինակի մասնագիտական իմացությունները մեծապես նպաստել են հաջողված մենագրություն ստեղծելուն: Հաջողության գրավականներից մեկն էլ եղել է այն, որ հետազոտողը պատմական երկարատև ժամանակաշրջանում իրեն զբաղեցնող հիմնահարցերը քննարկել է Անդրկովկասի և Ռուսաստանի պատմության ընդհանուր հետնախորքի վրա: Մենագրության ընդհանրացումներն ու եզրահանգումները փաստագրված են ու համոզիչ» (ՊԲՀ, 2003, -2, էջ 297):

Ա. Մելքոնյանի գրչին է պատկանում նաև «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ)» (2005) աշխատությունը, որտեղ եկեղեցու թեմական կառույցների ընդհանուր հենքի վրա իրապես նկարագծվում է հիշյալ երկու գավառների հոգևոր-կրթական կյանքը, 1829 թ. Ռուսաստանին միացումից հետո Սամցխե-Ջավախքում հայ քաղաքական ու հոգևոր-կրթական կյանքի աշխուժացման միտումները, երբ ծխական, մասնավոր ու պետական հարյուրավոր դպրոցներ էին բացվել տարածաշրջանում: Աշխատությունը համալրված է արխիվային բազմաթիվ փաստաթղթերով՝ որպես առարկայական հետազոտվող նյութ:

Ի մի բերելով իր բազում հոդվածները՝ Ա. Մելքոնյանը 2011 թ. հրապարակ է հանել «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու)» գիրքը: Այդ նույն թվականին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ, լույս է տեսնում նրա կենսամատենագիտությունը: Գրքույկն ամփոփում է անվանի պատմաբանի 25-ամյա գիտահասարակական գործունեության ամբողջական պատկերը՝ անչափ խոսուն լուսանկարների մի խմբաքանակով:

Բացի մենագրական աշխատանքներից, Ա. Մելքոնյանը նաև կոլեկտիվ աշխատանքի ջատագով է. այսպես, Վ. Ղազախեցյանի հետ կազմել ու խմբագրել է «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)» (2008) ժողովածուն և Է. Լ. Դանիելյանի համահեղինակությամբ գրել է «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (2008) գիրքը:

Հարկ է առանձնահատուկ նշել պատմաբան հայորդու քաղաքացիական հստակ ու սթափ դիրքորոշումը մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի, մասնավորապես Հայկական հարցի, Հայոց ցեղասպանությանը, հայ-թուրքական արձանագրություններին, հայ-վրացական փոխհարաբերություններին վերաբերող հիմնախնդիրների հրապարակային քննարկումների ժամանակ: Այդ հարցերին են նվիրված «Հայոց պատմության դասերն ու պատգամները» (2013) և «Ցեղասպանություն և հայրենազրկում. ճանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ)» (2015) ժողովածուները: Դրանցից

երկրորդում տեղ են գտել նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր լեզուներով հեղինակի ինչպես հրատարակված, այնպես էլ անտիպ հոդվածները, զեկուցումները և հարցազրույցները: Հայոց Մեծ եղեռնի հետևանքների վերացման, այն է՝ հատուցման հասնելու տեսանկյունից կարևորվում է միջազգային օրենսդրության մեջ հայրենազրկում հասկացության ձևակերպման անհրաժեշտությունը, այդ հարցում համահայկական և պետական հայեցակարգի ստեղծումը (ժողովածուի մասին պ. գ. թ. Արմեն Կարապետյանի գրախոսականը տե՛ս ՊԲՀ-ի սույն համարում՝ էջ 224–227):

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանի գիտակազմակերպչական գործունեության մասին մեր խոսքը թերի կլինի, եթե հատուկ չնշվի նրա տքնաջան աշխատանքը «Հայոց պատմություն» ակադեմիական նոր բազմահատորյակի հրատարակության պատրաստման ու տպագրության հարցում: Նկատենք, որ նրա տնօրինության օրոք Պատմության ինստիտուտում հիմնվեց «Մեսրոպ արք. Աշճյան» գիտական կենտրոնը, արքեպիսկոպոսի անունը կրող մատենաշարը, սկսեցին պարբերաբար հրատարակվել «Հայոց պատմության հարցեր» տարեկան ժողովածուները, ստեղծվեց ինստիտուտի գիտահրատարակչական-տպագրական բազան:

Ա. Մելքոնյանն իր գիտական եզրակացություններն ու մտորումները տարիներ ի վեր ներկայացրել է ու այսօր էլ շարունակում է այդ արդյունավետ շփումը լսարանների հետ՝ տարբեր գիտաժողովներում, ինչպես նաև դասախոսություններով ու ելույթներով հանդես է գալիս ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ իր ծանրակշիռ խոսքն ուղղելով սփյուռքահայ և օտարազգի ունկնդիրներին՝ Ուկրաինայում, Գերմանիայում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Թուրքիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Շվեդիայում, Իրանում, Իսպանիայում, Լիբանանում, Հունաստանում, Շվեյցարիայում, Հունգարիայում, Սիրիայում, Մեծ Բրիտանիայում, Կիպրոսում, Մոլդովայում:

2010 թ. Ա. Մելքոնյանը Հայոց պատմության և մշակույթի պատմության դասախոսությունների շարք է իրականացնում Հայոց բանակում՝ նպատակ ունենալով բարձրացնել հայ զինվորականի պատմաճանաչողական կարողությունները և ռազմահայրենասիրական ոգին:

Գիտավարչական աշխատանքին զուգահեռ ակադեմիկոսը վարում է նաև մանկավարժական եռանդուն գործունեություն. նա դասավանդում է Երևանի պետական համալսարանում, ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում: 2004–2006 թթ. զբաղեցրել է Երևանի բժշկական համալսարանի Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը: Դասախոսական աշխատանքը նպաստել է, որ նա ստեղծի նաև բուհական ու դպրոցական մի շարք դասագրքեր: Բազմիցս եղել է տարբեր բուհերի (Երևանի պետական, Խ. Աբով-

յանի անվան հայկական պետական մանկավարժական, Արցախի պետական համալսարաններ, Գյումրիի մանկավարժական ինստիտուտ) պատմության ֆակուլտետների պետական քննական հանձնաժողովների նախագահ:

Ա. Մելքոնյանը գլխավորում է Պատմության ինստիտուտի գիտական և նույն ինստիտուտում գործող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհուրդները, ԵՊՀ խորհրդի, պատմության ֆակուլտետի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդների անդամ է: Գիտական մի քանի հանդեսների ու տարեգրքի («Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմաբանասիրական հանդեսի», «Բանբեր հայագիտության», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Կանթեղ», «ՎԷմ», «Պատմություն և մշակույթ», «Պատմություն և հասարակագիտություն» և այլն) խմբագրական խորհուրդների անդամ է:

Ակադեմիկոսի ղեկավարությամբ պաշտպանվել է 14 թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են Հայաստանի պատմական ժողովրդագրության և ցեղասպանության թեմաներին: Նա եղել է մի շարք ատենախոսությունների ընդդիմախոս: Խմբագրել է բազմաթիվ գիտական աշխատություններ:

Ա. Մելքոնյանը գրասենյակային գիտնական չէ. հետազոտական, գիտավարչական ու մանկավարժական աշխատանքով ծանրաբեռնված՝ տարիներ շարունակ (սկսած 1997 թ.) մեկնել է Արևմտյան Հայաստան, շրջել մեր Հայրենիքի տարածքներով, ապա աշխատություններով ու տեսաֆիլմերով իր տպավորությունները կիսել հայրենակիցների հետ: Այդ ուխտագնացությունների արդյունք է «Կարոտի Էրգիր» (2006) ֆիլմը: 2007 թ. օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ Սևրի դաշնագրի օրը, նա բարձրացել է Արարատ լեռան գագաթը, և դրա հիման վրա ստեղծել «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» գիտահանրամատչելի աշխատությունը և պատմավավերագրական համանուն ֆիլմը (2008)՝ նվիրված հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին (1809 թ.) և Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանի Արարատի գագաթը բարձրանալու 180-ամյակին (1829 թ.): Գրքի և ֆիլմի պատմափաստագրական, պատմաճանաչողական, գաղափարադաստիարակչական, ազգային-հայրենասիրական կողմնորոշիչների մասին բովանդակալից գրախոսությամբ հանդես է եկել պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը (տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, -1, էջ 252–257):

Անվանի պատմաբանն իր գիտավարչական, մանկավարժական ու հասարակական ակտիվ գործունեության համար արժանացել է մի շարք մրցանակների ու պարգևների: Այսպես, նրա «Էրզրում» մենագրությունը և Էրզրումի նահանգի գավառների պատմությանը նվիրված շուրջ 30 հոդվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած «Երիտասարդ

գիտական – 94» մրցույթի գլխավոր մրցանակին (1994 թ.), իսկ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» աշխատությունը՝ «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի դրամաշնորհին և Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին (2004 թ.): Նա պարգևատրվել է նաև Երևանի բժշկական համալսարանի «Ոսկե» (2005 թ.), «Ֆրիտյոֆ Նանսեն» (2010 թ.), ԵՊՀ-ի ոսկե (2011 թ.), «Մանկավարժական Համալսարան» ոսկե (2011 թ.), ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2011 թ.) մեդալներով: Պատմագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Ա. Մելքոնյանը 2003 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի», իսկ 2005 թ.՝ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար, ՀՀ վարչապետի մեդալներով, նաև՝ «ԼՂՀ ազգային-ազատագրական պայքարի 25-ամյակի առթիվ» հուշամեդալով (2013 թ.), «Անդրանիկ Օզանյան» մեդալով (2013 թ.), «Արգիշտի Առաջին» հուշամեդալով (2014 թ.):

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանին՝ ներքին ազատություն ունեցող, համարձակ, շիտակ, կամեցող մարդուն, մաղթում ենք արևշատություն և նոր ու բազմաթիվ աշխատություններ՝ ի մարմնավորումն իր գիտական անսպառ մտահղացումների և երիտասարդական եռանդի:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Խմբագրության կողմից

Հանդեսի խմբագրական խորհրդի հետ ի սրտե շնորհավորում ենք անվանի գիտնականին, նրան մաղթում քաջառողջություն և գիտավարչական ասպարեզում նորանոր ձեռքբերումներ: